ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐ**

19.11.12թ N 14-1/4406-12

Ձեր N __________ առ __________

*Երևանի քաղաքապետ*
*պրն Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ*

*Հարգելի պարոն Մարգարյան*

*ՀՀ մշակույթի նախարարության մասնագետների կողմից ուսումնասիրվել է Կենտրոնական ծածկած շուկայի պահպանված հատվածի վիճակը և կատարվող շինարարարկան աշխատանքների ընթացքը:*

*Հայտնում ենք, որ շինության հուշարձանային հատվածում նախորդ դիտարկումների համեմատ արձանագրվել է որոշ փոփոխություններ՝ առաջացել են նոր նստվածքներ, ինչի հետևանքով պահպանված պատը շարունակվում է տեղաշարժվել, իսկ վնասված հատվածում կատարված պատերի ուժեղացման ժամանակավոր միջոցառումները չեն ապահովում պատի կայունությունը:*

*Հաշվի առնելով, որ ձմռան ժամանակահատվածում շինարարական աշխատանքներ հնարավոր չէ կատարել, անկանխատեսելի փլուզումից խուսափելու համար առաջարկում ենք հնարավորինս սեղմ ժամկետում կազմակերպել և իրականացնել վերոնշյալ պահպանված պատերի ուժեղացման աշխատանքները:*

*Խնդրում ենք Ձեր հանձնարարականը հարցի ուսումնասիրման և հուշարձանի պահպանված հատվածների ուժեղացման աշխատանքների կատարման վերաբերյալ:*

*Հարգանքով՝* Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

*ՀՊ գործակալություն*
*Կատ.՝ Կ. Այվազյան*
*Հեռ.՝ 565-118*

528682

№ 02/55646 20.11.12 թ.

ՀՀ, Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 տուն
☎ (37410) 523922, fax(37410) 523922 E-mail:info@mincult.am